ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N ՓՎ/184-2023
ՄԱԿ-Ի «ԿԼԻՄԱՅԻ ՓՈՓՈԽՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՇՐՋԱՆԱԿԱՅԻՆ ԿՈՆՎԵՆՑԻԱՅԻ ԵՎ ՓԱՐԻԶՅԱՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԻ ՊԱՀԱՆՋՆԵՐԻ ՈՒ ԴՐՈՒՅԹՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՄԻՋԳԵՐԱՏԵՍՉԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ԽՈՐՀՐԴԻ 4-ՐԴ ՆԻՍՏԻ

27 նոյեմբերի 2023 թվական

ԽՈՐՀՐԴԻ ՆԻՍՏԸ ՎԱՐՈՒՄ ԷՐ՝

Փոխվարչապետ	**Տ. Խաչատրյան**

ՄԱՍՆԱԿՑՈՒՄ ԷԻՆ՝

Շրջակա միջավայրի նախարար	Հ. Սիմիդյան
Ներքին գործերի նախարարության փրկարար ծառայության տնօրեն–Ներքին գործերի նախարարի տեղակալ	Կ. Ցուցուլյան
Արդարադատության նախարարի տեղակալ	Կ. Կարապետյան
Ֆինանսների նախարարի տեղակալ	Է. Հակոբյան
Առողջապահության նախարարի տեղակալ	Լ. Նանուշյան
Բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարի առաջին տեղակալ	Գ. Մանթաշյան
Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի տեղակալ	Ա. Մարտիրոսյան
Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի տեղակալ	Դ. Խաչատրյան
Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի տեղակալ	Ն. Մանուկյան
Կադաստրի կոմիտեի ղեկավարի տեղակալ	Գ. Մանուկյան
Քաղաքաշինության կոմիտեի նախագահի տեղակալ	Ն. Պետրոսյան
Փոխվարչապետ Տիգրան Խաչատրյանի խորհրդական	Ա. Գասպարյան
Փոխվարչապետ Տիգրան Խաչատրյանի օգնական	Լ. Առաքելյան
Վիճակագրական կոմիտեի վիճակագրության պետական խորհրդի անդամ	Ն. Բաղդասարյան
Հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի անդամ	Կ. Սարգսյան
Շրջակա միջավայրի նախարարության կլիմայական քաղաքականության վարչության պետ	Ն. Բուդոյան
Շրջակա միջավայրի նախարարության «Հիդրոօդերևութաբանության և մոնիթորինգի կենտրոն» ՊՈԱԿ տնօրեն	Լ. Ազիզյան
Արտաքին գործերի նախարարության ՄԱԿ-ի կայուն զարգացման բաժնի պետ	Դ. Մանուկյան
Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության էներգետիկայի վարչության պետ	Տ. Մելքոնյան
ՄԱԿ բնապահպանական պորտֆելի ղեկավար	Հ. Ղազարյան
ԵՄ կլիմայի համար ՄԱԶԾ-ԵՄ տարածաշրջանային ծրագրի հայաստանյան բաղադրիչի ղեկավար	Ա. Բաղդասարյան

ՕՐԱԿԱՐԳԻ ՔՆՆԱՐԿՈՒՄ

Խորհրդի անդամների կողմից միաձայն հաստատվեց ՄԱԿ-ի «Կլիմայի փոփոխության մասին» շրջանակային կոնվենցիայի և Փարիզյան համաձայնագրի պահանջների ու դրույթների կատարման միջգերատեսչական համակարգման խորհրդի 4-րդ նիստի օրակարգի նախագիծը:

I. Օրակարգային հարց 1՝ Հայաստանի Հանրապետության ջերմոցային գազերի ցածր արտանետումներով զարգացման երկարաժամկետ ռազմավարություն.

1. Զեկույց ներկայացրեց՝

1) Շրջակա միջավայրի նախարարության կլիմայական քաղաքականության վարչության պետ Նոնա Բուդոյանը՝ անդրադառնալով Կառավարության հնգամյա միջոցառումների ծրագրով նախատեսված՝ Ջերմոցային գազերի ցածր արտանետումներով զարգացման երկարաժամկետ ռազմավարության նախագծին: Տեղեկացրեց, որ ազգային մակարդակով սահմանված գործողություններով Հայաստանը հանձնառել է մինչև 2030 թվականը ՋԳ արտանետումները կրճատել 40%-ով, իսկ մինչև 2050 թվականը մեկ շնչի հաշվով՝ մինչև 2.07 տ. CO_2: Ներկայացրեց ջերմոցային գազերի կրճատման տեխնիկական հնարավորությունները, ինչպես նաև 2030 և 2040 թվականների հիմնական կանխատեսումները՝ ըստ երեք հիմնական՝ (1) «Առանց միջոցառումների», (2) «Միջոցառումներով» և (3) «Լրացուցիչ միջոցառումներով սցենարների»: Զեկույցի վերջում նշեց, որ առաջարկվող միջոցառումների իրականացման համար ներդրումների գնահատված կողմնորոշիչ ծավալը մինչև 2050 թվականը կազմում է 1,640,000 մլն ՀՀ դրամից 2,700,000 մլն դրամ:

2. Ներկայացվեցին հետևյալ էական դիտարկումները.

1) Շրջակա միջավայրի նախարար Հակոբ Սիմիդյանն առաջարկեց ռազմավարությամբ նախատեսված հիմնական ուղղություններով անելիքները քննարկել ըստ ոլորտների՝ արդյունքային ցուցանիշները և ֆինանսական գնահատականը հստակեցնելու նպատակով:

3. Փոխվարչապետի կողմից հանձնարարվեց՝

1) Շրջակա միջավայրի նախարար Հակոբ Սիմիդյանին՝ ՋԳ ցածր արտանետումներով զարգացման երկարաժամկետ ռազմավարության նախագծում, ըստ ոլորտների, ճշգրտել ելակետային և թիրախային ցուցանիշները, ինչպես նաև ներկայացնել մինչև 2030 թվականը նախատեսվող միջոցառումների իրականացման համար ֆինանսական կողմնորոշիչ գնահատական:

4. Համատեղ քննակման արդյունքում որոշվեց.

Հավանություն տալ Հայաստանի Հանրապետության ջերմոցային գազերի ցածր արտանետումներով զարգացման երկարաժամկետ ռազմավարությանը և

առաջարկված ճշգրտումներն իրականացնելուց հետո նախագիծը ներկայացնել առաջիկա նախարարական կոմիտեի քննարկմանը:

II. Օրակարգային հարց 2՝ մթնոլորտային օդի մոնիթորինգի համակարգի կատարելագործման հետ կապված առաջընթացի ներկայացում.

1. **Զեկույց ներկայացրեց՝**
   1) Շրջակա միջավայրի նախարարության «Հիդրոօդերևութաբանության և մոնիթորինգի կենտրոն» ՊՈԱԿ տնօրեն Լևոն Ազիզյանը: Անդրադառնալով մթնոլորտային օդի մոնիթորինգի համակարգի բարելավմանն ուղղված քայլերին՝ տեղեկացրեց, որ մթնոլորտային օդի մոնիթորինգի համակարգի արդիականացման նպատակով մշակվել է միջնաժամկետ ծախսային ծրագրային հայտ և 2024 թվականի պետական բյուջեի նախագծում նախատեսվել են ֆինանսական միջոցներ երկու դիտակայանի ձեռքբերման համար՝ ընդհանուր 342 մլն դրամի չափով: Ներկայացրեց 2024 թվականին նախատեսվող միջոցառումները և մթնոլորտային օդի մոնիթորինգի համակարգի զարգացման հեռանկարները:

2. **Փոխվարչապետի կողմից հանձնարարվեց՝**
   1) Շրջակա միջավայրի նախարար Հակոբ Սիմիդյանին՝ **մեկամսյա ժամկետում** ակտիվորեն համագործակցել միջազգային գործընկերների հետ օդի մոնիթորինգի համակարգի բարելավման, այդ թվում՝ դիտակայանների քանակի ավելացման ուղղությամբ:

III. Օրակարգային հարց 3՝ Խորհրդի 2024 թվականի աշխատանքային պլանի ներկայացում.

1. **Զեկույց ներկայացրեց՝**
   1) Շրջակա միջավայրի նախարարության կլիմայական քաղաքականության վարչության պետ Նոնա Բուդոյանը՝ հակիրճ անդրադառնալով Խորհրդի՝ 2024 թվականի աշխատանքային ծրագրին:

2. **Փոխվարչապետի կողմից հանձնարարվեց՝**
   1) Շրջակա միջավայրի նախարար Հակոբ Սիմիդյանին՝ **երկշաբաթյա ժամկետում** Խորհրդի 2024 թվականի աշխատանքային պլանը գրավոր շրջանառել Խորհրդի անդամներին:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՓՈԽՎԱՐՉԱՊԵՏ ՏԻԳՐԱՆ ԽԱՉԱՏՐՅԱՆ

07.12.2023
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ